ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 օգոստոսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

110
(2960)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

Կոտայքի մարզպետի կնոջ՝ Ռոզա Ասատրյանի հայտարարագրից տեղեկանում ենք, որ նա եւս պաշտոնատար անձ է համարվում վարչապետի աշխատակազմում:

Այստեղից հարց է առաջանում, թե ինչպե՞ս է Ռոզա Ասատրյանը միաժամանակ աշխատում մեկ պետական, երկու համայնքային եւ մեկ ՓԲԸ-ում, այն դեպքում, երբ օրենքը խստիվ արգելում է պետական ծառայողին որեւէ այլ տեղ աշխատել: Մարդը ֆիզիկապես եւս չի կարող միաժամանակ աշխատել չորս տարբեր աշխարհագրական գոտիներում:

Ուսումնասիրելով Ասատրյանի ներկայացրած հայտարարագիրը՝ նկատում ենք, որ նրա՝ հաշվետու տարվա եկամուտը կազմում է 4 մլն 291 հազար դրամ, որից 2 մլն 802 հազար դրամը վարչապետի աշխատակազմից ստացած աշխատավարձն է, 290 հազար դրամը՝ «Գառնիի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ից ստացած գումարը, 1 մլն 24 հազար դրամը՝ «Ծաղկահովիտ առողջության կենտրոն» ՓԲԸ-ից, իսկ 174 հազար դրամը՝ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանի աշախատակազմից ստացած գումարը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Կոտայքի մարզի մարզպետ Ահարոն Սահակյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչպես է կինը միաժամանակ 4 աշխատավայրում աշխատում:

Վերջինս հորդորեց, որ մեր տեղեկությունը կրկին ճշտենք, քանի որ իր կինը աշխատում է տարածքային զարգացման հիմնադրամում:

Ճշտող հարցին, թե իր կինը միայն այնտե՞ղ է աշխատում, մարզպետը պատասխանեց. «պայմանագրով՝ ոչ, կարծեմ՝ պայմանագրային այլ ծառայություններ էլ է մատուցում»:

Սահակյանը ասաց, որ մանրամասն չի տիրապետում հարցին, սակայն հավաստիացրեց, որ իր կնոջ գործում օրենքի խախտում չկա:

ՔՊ-ական իշխանության միջին չինովնիկների փաստաթղթերի բովանդակությունը (տես ArmLur.am կայքում) վիճակագրորեն տարածելով ողջ կառավարության մասշտաբով՝ կստանանք աղետի հասնող, պետական կոռուպցիոն կայուն ինստիտուտ: Այսպես, Արագածոտնի փոխմարզպետ Միլադա Հովհաննիսյանը ներկայացնում է հայտարարագիր՝ նշելով, որ «Մերսեդես-Բենզ» ավտոմեքենան ձեռք է բերել 01.01.2018 թվականին: Հաջորդ հայտարարագրով այդ նույն «Մերսեդես-Բենզի» ձեռքբերման տարեթիվը դառնում է 13.06.2019 թվականը (մոտ երկու տարվա շեղում). այս կեղծիքի նպատակները կարող են լինել մի քանիսը, որոնք, կարծում ենք, պետք է պարզեն իրավապահները, եւ ոչ թե լրագրողները: Ուսումնասիրում ենք Միլադա Հովհաննիսյանի եղբոր հայտարարագիրը. նա Արայիկ Հարությունյանի օգնականն է: Սուրեն Հովհաննիսյանը թեեւ ներկայացնում է համեստ՝ իսկը հեղափոխականի հայտարարագրած գումար՝ 4.9 միլիոն դրամ, սակայն, հանկարծ, հաջորդ տարի սույն պաշտոնյան ձեռք է բերում 30.5 միլիոն դրամով բնակարան Երեւանում: Այստեղ պետք է հանուն արդարության նշել, որ Հովհաննիսյանը մյուս ՔՊ-ականների պես չի պահպանել ձեւական կողմը եւ չի արտացոլել ինչ-որ վարկ՝ իբրեւ գումարի ծագման աղբյուր: Առավել ուշագրավ է քույր ու եղբոր փոխկապակցված անձի՝ նրանց հոր՝ Մկրտիչ Հովհաննիսյանի հայտարարագիրը, ըստ որի՝ նա չունի ոչ մի լումա դրամական միջոց, ոչ մի լումա աշխատավարձ կամ շահաբաժին, սակայն վերջինիս ֆեյսբուքյան էջի փաստերը, որպես օրենքի տեսանկյունից «երրորդ անձից ստացված տեղեկություն», արձանագրում են՝ փոխմարզպետի եւ եղբոր՝ կառավարության պաշտոնյայի հայրը տիրապետում է լուրջ բիզնեսների, խոշոր արտադրության համահիմնադիր է:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին՝ Ֆազին ազատ արձակելու համար կալանավորված եւ դատական քաշքշուկների մեջ հայտնված դատավոր Արուսյակ Ալեքսանյանի հարցը հասել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարան: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ իր նկատմամբ ապօրինի քրեական հետապնդման հարցով դատավոր Ալեքսանյանը դիմում է ներկայացրել ՄԻԵԴ: Նշենք, որ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը մեղադրվում է քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներից մեկի վարույթում գտնվող քրեական վարույթով՝ իր եղբոր ընկերոջ եւ իր մտերիմ փաստաբան Էրիկ Ալեքսանյանի պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունն իրեն մակագրելու, ապա այն բավարարելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Ըստ ԱԱԾ-ի առաջադրած մեղադրանքի՝ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը, ի վերջո, մեղադրյալ Սերգեյ Գրիգորյանի կալանքը փոխարինել էր գրավով: Եվս մեկ անգամ հիշեցնենք, որ Սերգեյ Գրիգորյանը բոլորին հայտնի Ֆազն է, որին սպանեցին այս տարվա հունիսի 11-ին, եւ գործի մեղադրանքով այսօր կալանավորված է Ռուստամ Ստեփանյանը՝ Չաղ Ռուստամը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր ՀՀ կառավարության նիստում որոշվելու է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ սահմաններ գերակա շահ ճանաչելու հարցը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կառավարությունը նպատակ ունի Սասունիկ համայնքում հողերը վերցնել գյուղացիների ձեռքից եւ այնտեղ Ակադեմիական քաղաքի ծրագիրն իրականացնել: Պաշտոնական փաստաթղթերից տեղեկացանք նաեւ, որ հարցը զեկուցելու է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Ըստ այդ նախագծի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-L որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով սույն որոշման NN 1, 2 եւ 3 հավելվածներում նկարագրված՝ Երեւան քաղաքի եւ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ ճանաչել հանրության գերակա շահ՝ հետեւյալ հիմնավորումներով՝ ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերի նկատմամբ, քանի որ ծրագիրը միտված է տնտեսական կայուն եւ առաջընթաց զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը՝ ժամանակակից կրթական, հետազոտական եւ նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայր ստեղծելու միջոցով:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ՌԴ ԱԳՆ-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը երեկ ասել է, որ Ռուսաստանի համար դժվար է հասկանալը, թե ինչու է Երեւանը սաբոտաժի ենթարկում Սյունիքի մարզում հաղորդակցությունների առաջարկման վերաբերյալ պայմանավորվածությունը:

Լավրովը նաեւ նշել է, որ Ռուսաստանը կողմ է խաղաղության պայմանագրի շուտափույթ կնքմանը, սակայն ինչը վերաբերում է Սյունիքի մարզի հաղորդակցություններին, ապա դրա համար, ցավոք սրտի, Հայաստանի ղեկավարությունն է սաբոտաժների ենթարկում պայմանավորվածությունը, որի ներքո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ստորագրությունն է:

Վերջինիս խոսքով՝ եռակողմ պայմանավորվածությունների «հիմքում դրվածն այսօր էլ մնում է լիովին արդիական»:

«Ժողովուրդ» օրաթերթն այս հարցով կապ է հաստատել քաղաքագետ Սուրեն Սուրենյանցի հետ:

-Պարոն Սուրենյանց, Սերգեյ Լավրովի արած հայտարարություններն ի՞նչ են իրենցից ենթադրում, ի՞նչ են դրանք նշանակում:

-Այն՝ ինչ ասել է, ըստ էության... Ըստ ամենայնի, նա հասկացել է, որ Հայաստանը չի կատարել հայտնի եռակողմ հայտարարության 9-րդ կետը: Այստեղ, եթե մենք Լավրովից նեղսրտելու առիթ ունենք, դա միայն այն բանի համար, որ նա չի խոսել նաեւ Ադրբեջանի պատասխանատվության մասին, քանի որ բազմաթիվ կետեր էլ Ադրբեջանը չի կատարել, բայց այն, որ Հայաստանի իշխանությունը, ինչ-որ փուլից սկսած, որոշեց այդ 9-րդ կետը չկատարել, այդ մասին ես էլ 100 անգամ փաստել եմ, ավելին՝ նա գնաց նույնիսկ Արցախի զոհաբերության ճանապարհով, որպեսզի, այսպես կոչված միջանցքային օրակարգը, տրամաբանությունից հանի, բայց ինչպես տեսանք՝ չհաջողեց:

-Պարոն Սուրենյանց, Դուք էլ Ձեր խոսքում անդրադարձաք եռակողմ պայմանավորվածություններին, անգամ դրան է անդրադարձել Լավրովը: Արդյո՞ք շարունակում են արդիական մնալ այդ պայմանավորվածությունները:

-Ոչ թե արդիական են մնում, այլ ռուսական հարթակում բանակցություններ չկան, եւ միայն այն փաստը, որ երեկ (խմբ.) Ալիեւը համաձայնություն տվեց բանակցությունները շարունակելու ռուսական հարթակում, դեռ չի խոսում այն մասին, որ բանակցություններն այդ հարթակում վերսկսելու են, որովհետեւ Ադրբեջանն ամեն բան արել է, որ բանակցությունները տեղափոխվեն ուղղակի, չմիջնորդավորված հարթություն, երբ որ միջնորդներ չեն լինի եւ ուժային դիսբալանսի պայմաններում ինքը Հայաստանին կթելադրի իր օրակարգը: Հիմա այս պարագայում կասեք՝ ինչո՞ւ Ադրբեջանը համաձայնություն տվեց, քանի որ Ալիեւը վստահ է, որ Նիկոլ Փաշինյանը մերժելու է այդ միջնորդությունը: Հետեւաբար ես հիմա չեմ կանխատեսում, որ մոտ ապագայում ռուսական հարթակում հնարավոր է բանակցությունների վերսկսում: Ներկայումս Ռուսաստանի նպատակն այլ է՝ թույլ չտալ արեւմուտքի դերակատարության ուժեղացում տարածաշրջանում: Գուցե դրան նա կարողանա հասնել, բայց մոտ ապագայում ես չեմ տեսնում հնարավորություն, որ բանակցությունները ռուսական հարթակ կարող են տեղափոխվել:

-Պարոն Սուրենյանց, Լավրովի այս հայտարարություններից հետո շատերը կարծես թե քարկոծում են վերջինիս, ի՞նչ եք կարծում, մի՞թե իր հայտարարություններն են պատճառը:

-Գերէմոցիոնալ, հաճախ՝ անմակարդակ մեկնաբանություններին անդրադառնալ չեմ ուզում: Տրամաբանական չէ քարկոծել մի երրորդ երկրի արտգործնախարարի, այն պարագայում, երբ այդ փաստաթղթի տակ դրված է քո պետության ղեկավարի ստորագրությունը. եթե անգամ Լավրովին վերապահում էլ կա՝դա այն հարցում է, որ նա չի ընդգծել Ադրբեջանի պատասխանատվությունը մնացած կետերի չկատարման հարցում: Սա՛ է, վերջ:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԱՐՑԱԽԻ ԱԺ

ԱՐՇԱՎ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅԱՀԱԼԱԾ ՔԱՅԼԵՐԻ ԴԵՄ

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները միասնական կոչով են հանդես եկել.

«2024թ. նոյեմբերի 11-22-ը Բաքվում նախատեսվում է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովը (COP29), որին մասնակցելու հրավեր ունեն տարբեր երկրների ղեկավարներ, պաշտոնական պատվիրակություններ, միջազգային կազմակերպությունների պատասխանատուներ եւ բազմաթիվ լրագրողներ: Միանգամայն ակնհայտ է, որ Բաքուն այդ համաժողովն օգտագործում է՝ մոլորեցնելու համաշխարհային հանրությանը եւ շեղելու հանրային կարծիքը իր երկրի էության հետ շաղկապված ոճրագործություններից: Կասկածից վեր է նաեւ, որ նշված համաժողովին հրավիրված պաշտոնյաների եւ կառույցների անտարբեր մոտեցումը Ադրբեջանի ոճրագործությունների նկատմամբ այդ երկրի ղեկավարության կողմից դիտարկվելու է որպես քաջալերանք՝ իրականացված ու շարունակվող հանցագործությունների, որի ցանկից կարելի է առանձնացնել.

● Արցախում 2023թ. սեպտեմբերին Ադրբեջանի կողմից ձեռնարկված էթնիկ զտումները՝ որպես ցեղասպանություն եւ մարդկության դեմ իրականացված հանցագործություն:

● Ներխուժումը Հայաստանի Հանրապետության տարածք եւ ուժի կիրառման սպառնալիքով ճնշումները ՀՀ-ի վրա:

● Բաքվի կողմից պատանդառված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարների եւ մյուս գերիների նկատմամբ կեղծ մեղադրանքները, վերաբերմունքն ու նրանց անորոշ ճակատագիրը:

● Ադրբեջանի կողմից շարունակվող հակահայկական քաղաքականությունը, որն արտահայտվում է նաեւ Արցախի պատմամշակութային հարուստ ժառանգության ոչնչացման, յուրացման եւ ինքնությունը կեղծելու գործուն քայլերով:

Վերոնշյալ հանցավոր գործողությունների շարքը կարելի է երկար շարունակել: Մարդկությանը հուզող գլոբալ հարցերի՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովի անվան տակ այս արարքների քողարկումը միայն ու միայն խորացնելու է անվստահության ու անկայունության մթնոլորտը, որն Ադրբեջանի կողմից պարտադրվել է Հարավային Կովկասի տարածաշրջանին 2020թ. 44-օրյա պատերազմի, լիակատար շրջափակման եւ ցեղասպանության սպառնալիքի ներքո Արցախի Հանրապետության բռնազավթման եւ ամբողջովին հայաթափելու միջոցով:

Կոչ ենք անում համայն հայությանը եւ տարածաշրջանի՝ խաղաղությամբ շահագրգիռ երկրներին, կազմակերպություններին ու անհատներին միանալ Հայ Դատի կենտրոնական գրասենյակի եւ Միջազգային քրեական դատարանի գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոյի սկսած արշավին՝ տեղեկատվական դաշտում, սոցիալական ցանցերում եւ անհատական հաղորդակցություններով բացահայտել Ադրբեջանի նենգ մտադրությունները եւ սթափության կոչ հղել միջազգային հանրությանը:

«Ազատ Հայրենիք-ՔՄԴ» խմբակցություն

«Միասնական հայրենիք» խմբակցություն

«Արդարություն» խմբակցություն

«ՀՅ Դաշնակցություն» խմբակցություն

«Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն»:

«ԱՅԼԵՎՍ ՈՉ ՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ». ՄԵԴՎԵԴԵՎ

ՌԴ Անվտանգության խորհրդի փոխնախագահ Դմիտրի Մեդվեդեւը բացառել է Կիեւի հետ բանակցությունների հավանականությունը՝ հայտարարելով, որ Ռուսաստանը կարող է «բանակցային ծուղակում» հայտնվել: Այս մասին նա գրել է իր թելեգրամյան ալիքում:

«Իմ կարծիքով՝ վերջին շրջանում, թեեւ տեսականորեն, բայց գոյություն ուներ մի վտանգ՝ բանակցային ծուղակ, որում կարող էր հայտնվել մեր երկիրը որոշակի հանգամանքների դեպքում» - գրել է Մեդվեդեւը՝ մանրամասնելով, որ խոսքը «միջազգային հանրության կողմից առաջարկված եւ Կիեւի ռեժիմի կողմից պարտադրված խաղաղության շուրջ վաղ ու անհարկի բանակցությունների» մասին է, որոնց հեռանկարներն ու հետեւանքները պարզ չեն:

«Նեոնացիստների կողմից Կուրսկի մարզում ահաբեկչության իրականացումից հետո ամեն ինչ իր տեղն ընկավ: Ոչ մեկի կողմից չլիազորված միջնորդների դատարկախոսությունը չքնաղ աշխարհի թեմայով դադարեցված է: Հիմա բոլորն ամեն ինչ հասկանում են, նույնիսկ եթե չեն բարձրաձայնում: Նրանք հասկանում են՝ այլեւս ոչ մի բանակցություն մինչեւ թշնամու լիակատար ջախջախումը», - գրել է նա:

ԻՍՐԱՅԵԼԻ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լիբանանցի քաղաքագետ եւ լրագրող Մարուան Համադին MTV Lebanon-ին տված հարցազրույցում ասել է, որ Իսրայելի եւ Լիբանանի միջեւ պատերազմին, լավագույն դեպքում, մի քանի օր է մնացել:

Համադին նշել է, որ բանակցային գործընթացին ներկա իր բարձրաստիճան աղբյուրները տեղեկացրել են, որ Իսրայելը մի քանի ժամվա, կամ մեկ երկու օրվա ընթացքում պատերազմ կսկսի Լիբանանի դեմ:

ՀՐԱԴԱԴԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը ԱՄՆ Պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ հեռախոսազրույցի ընթացքում քննարկել է պաղեստինյան ՀԱՄԱՍ շարժման եւ Իսրայելի միջեւ հրադադարի շուրջ բանակցություններում ստեղծված իրավիճակը. հայտարարել է Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Օնջու Քեչելին:

«Ամերիկյան կողմի խնդրանքով այսօր տեղի ունեցած հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել է ՀԱՄԱՍ-ի եւ Իսրայելի միջեւ հրադադարի շուրջ բանակցությունների իրավիճակը եւ տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները», - գրել է դիվանագետը X-ի միկրոբլոգում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի առաջարկած նախարարների կաբինետի բոլոր անդամները չորեքշաբթի ստացել են Իրանի խորհրդարանի վստահության քվեն:

Պեզեշքիանը նախարարների թեկնածուների ցանկը ներկայացրել է Իրանի խորհրդարանին օգոստոսի 11-ին՝ իր երդման արարողությունից գրեթե երկու շաբաթ անց:

Խորհրդարանն առաջարկված նախարարների որակավորումները սկսել է քննարկել շաբաթ օրը, իսկ վերանայման նիստերը շարունակվել են մի քանի օր:

Աբբաս Արաղչին 244 ձայնով դարձել է Իրանի նոր արտգործնախարար: 192 ձայնով էկոնոմիկայի նախարար է դարձել Աբոլնասեր Հեմմատին:

Հետախուզության նախարարի պաշտոնի թեկնածու Խոջա ալ Իսլամ Խաթիբը ստացել է 261 ձայն: Այսօրվա նիստի սկզբում Իրանի նոր նախագահը վերահաստատել է իր վարչակազմի եւ խորհրդարանի միջեւ համագործակցության ձգտումը:

ՌԴ ՏԱՐԱԾՔ ՆԵՐԽՈՒԺԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Ուկրաինայի ԶՈՒ կողմից ՌԴ տարածք ներխուժելու փորձը չեղարկում է ավազակային խունտայի հետ ցանկացած բանակցությունների հնարավորությունը, հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

Նա հավելել է, որ Կիեւն արդարացումներ է փնտրում իր ահաբեկչական գործողության համար՝ դրանք ուղեկցելով կասկածելի փաստարկներով:

ԵԱՏՄ ԴԻՏՈՐԴ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Իրանը դիմում է ներկայացրել Եվրասիական տնտեսական միությունում դիտորդ պետության կարգավիճակ ստանալու համար: Այս մասին հաղորդել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵԱՏՀ) մամուլի ծառայությունը:

«Իրանի Իսլամական Հանրապետության դիմումը Եվրասիական տնտեսական միությունում դիտորդ պետության կարգավիճակ ստանալու վերաբերյալ քննարկվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կենտրոնակայանում», - ասվում է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ այս հարցի շուրջ խորհրդակցությունները տեղի են ունեցել տեսակոնֆերանսի ձեւաչափով՝ ինտեգրման եւ մակրոտնտեսության նախարար Սերգեյ Գլազեւի նախագահությամբ:

«Խորհրդակցությունների մասնակիցները նշել են ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի Իսլամական Հանրապետության առեւտրատնտեսական համագործակցության առաջընթաց զարգացումը եւ ողջունել ԵԱՏՄ-ում դիտորդ պետության կարգավիճակ ստանալու ընթացակարգ նախաձեռնելու՝ երկրի մտադրությունը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ԱՄՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆ ԱԿՏԻՎ ԵՎ ԱՊՇԵՑՆՈՂ Է

Ամերիկայի Միացյալ Նահանգները պատրաստվում է երկրի քաղաքական կարեւորագույն իրադարձությանը՝ նախագահական ընտրություններին, ինչին «ուշադիր հետեւում» սպասում են աշխարհի բոլոր պետություններն ու միլիոնավոր մարդիկ ողջ աշխարհում:

Ինչո՞վ են ԱՄՆ-ի նախագահական ընտրություններն այդքան կարեւոր:

Պատասխանն ավելի քան պարզ է. Միացյալ Նահանգները ավելի քան մեկ դար է աշխարհում գոյություն ունեցող գերտերություններից մեկն է, որը որոշիչ ազդեցություն ունի տեղի ունեցող գրեթե բոլոր իրադարձությունների վրա: Հենց ԱՄՆ-ի քաղաքական դիրքորոշումը, նախագահների հայտնած կարծիքներն ու ձեռնարկած գործողությունները, ինչպես նաեւ երկրի արտաքին քաղաքականությունն ու աշխարհի տարբեր կետերում ընթացքող ռազմական գործողություններին ԱՄՆ-ի մասնակցությունը որոշիչ ազդեցություն են ունենում գործընթացների հանգուցալուծման վրա:

Այս համատեքստում կարեւոր է հասկանալ, թե ինչ իրավիճակ է Միացյալ Նահանգներում, ինչ են ցույց տալիս «էքզիթ փոլերը», եւ թե ինչ են մտածում ԱՄՆ-ի քաղաքացիներն այս հարցի շուրջ:

Նախագահական ընտրությունների մեկնարկին թեկնածուները հստակ էին՝ ԱՄՆ-ի գործող նախագահ դեմոկրատ Ջո Բայդենն ու ԱՄՆ-ի նախկին նախագահ, հանրապետական Դոնալդ Թրամփը, որի նկատմամբ 2021 թվականին իմփիչմենթի գործընթաց էր սկսվել: Սակայն հուլիսի 21-ին Ջո Բայդենը հայտարարեց, որ դուրս է գալիս մրցապայքարից, իսկ ավելի ուշ հայտնեց, որ «Դեմոկրատական կուսակցության» թեկնածուի կարգավիճակում սատարում է իր փոխնախագահ Քամալա Հարրիսին: Օգոստոսի 20-ին պաշտոնապես հայտարարվեց Հարրիսի թեկնածությունը:

Թեկնածուներից ո՞ւմ են նախընտրում ամերիկացիները եւ ինչո՞ւ:

Պետք է նշել, որ մրցակցության մեջ ի սկզբանե Դոնալդ Թրամփը գերազանցում էր Ջո Բայդենին, եւ դա պայմանավորված էր Բայդենի արդյունաբերական ձախողված քաղաքականությամբ եւ արտահանման շուկայում առկա ցնցումներով, ինչը կապվում է նախ փոխնախագահ Քամալա Հարրիսի հետ՝ վտանգելով հաղթանակի նրա հնարավորությունը:

Սակայն նա մի կարեւոր առավելություն ունի՝ ավելի երիտասարդ է քան Թրամփը՝ երիտասարդ ավելի քան 18 տարով:

Ինչ վերաբերում է Դոնալդ Թրամփին, ապա նրան կարելի է առանձնացնել միգրացիայի ոլորտի քաղաքականությամբ եւ պատերազմական գործողություններին ԱՄՆ-ի մասնակցությամբ: Հայտնի է, որ հենց նրա նախագահության շրջանում կառուցվեց ԱՄՆ-ի եւ Մեքսիկայի միջեւ գտնվող պատը եւ սկսվեց ապօրինի միգրացիայի դեմ պայքարի ակտիվ փուլը: Ամերիկացիների հետ զրույցների ընթացքում պարզ է դառնում, որ միգրացիայի ոլորտում ունեցած քաղաքականության հարցում հենց Թրամփն է շահել մարդկանց վստահությունը: Բացի այդ, համեմատության մեջ, ըստ ամերիկացիների, Թրամփի օրոք ԱՄՆ-ում կյանքն անհամեմատ ավելի ապահով է եղել, ավելի քիչ են եղել հանցագործությունները, փողոցում զենքի կիրառումն ու թմրանյութերի տարածումը:

Անդրադառնալով պատերազմական գործողություններին ԱՄՆ-ի մասնակցությանը՝ պետք է նշել, որ Թրամփի նախագահության շրջանում Միացյալ Նահանգներն ամենապասիվ մասնակցությունն է ունեցել այլ տարածաշրջաններում ընթացող պատերազմներին՝ գործընթացները մեղմելուն եւ կայունություն հաստատելուն միտված քաղաքականությամբ: Հարկ է նշել, որ հենց այս քաղաքականության արդյունքում էլ Իրանի Իսլամական Հանրապետությունը դուրս եկավ «Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրից» (իրանի միջուկային ծրագիր, JCPOA), որի մեկնարկը տրվել էր 2015 թվականին: Մինչդեռ Սիրիայում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի Դաշնության համատեղ ջանքերով հնարավոր եղավ զգալի առաջընթաց ունենալ՝ ի վնաս «Իսլամական պետություն» (ISIS) խմբավորման:

Վերադառնալով ԱՄՆ-ի նախագահական ընտրություններին՝ նշենք, որ նոյեմբերին կայանալիք ընտրությունների արդյունքները դեռ զարմացնել են տալու աշխարհին: Դեռեւս հուլիսի վերջին Դոնալդ Թրամփը առաջատարի դիրքերում էր, իսկ երեկ հրապարակված «էքզիթ փոլերի» արդյունքներով Թրամփը կհավաքի ընտրողների ձայների 43.8 տոկոսը, իսկ Քամալա Հարրիսը՝ 46.6:

Մնում է սպասել եւ հասկանալ Մերձավոր Արեւելքում, Հավային Կովկասում եւ Ուկրաինայում զարգացող գործընթացներին զուգահեռ ինչ արդյունքներ կգրանցվեն ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում եւ ԱՄՆ-ի նոր ղեկավարության գործունեությունը ինչ կփոխի համաշխարհային քաղաքական թատերաբեմում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՋՐԿՎԵԼ ԵՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀ 7 քաղաքացիներ ապօրինաբար զրկվել են ազատությունից. օրինական շենգեն վիզաների պարագայում նրանց թույլ չեն տալիս մուտք գործել Բուլղարիա եւ պահում են Սոֆիայի օդանավակայանի բանտախցերում՝ անմարդկային պայմաններում՝ զրկելով սննդից, ջրից, նվաստացնում են եւ հարցերն անպատասխան թողնում:

«Ժողովուրդ»-ի հետ զրույցում «Տնտեսական իրավունքի կենտրոն» ՀԿ նախագահ Մովսես Արիստակեսյանը պատմում է, որ իր հարազատները նույնպես խնդրի զոհ են դարձել. «Այս ամենը թրաֆիգինգ է հիշեցնում եւ այդ քաղաքացիների կյանքը վտանգի է ենթարկված: Իմ ահազանգերի արդյունքում վերջապես 8 ժամ հետո նրանց հետ տեսակցել է Բուլղարիայում ՀՀ դեսպանը եւ հիմա ընթանում են բանակցություններ: Խիստ անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ ԱԳՆ-ն բողոքի նոտա հղի Բուլղարիայի կառավարությանը՝ նշված դեպքերի շարունակականությունը կասեցնելու եւ ՀՀ տուժած քաղաքացիների նյութական ու ոչ նյութական՝ բարոյական վնասները փոխհատուցելու համար»:

Մովսես Արիստակեսյանի խոսքով՝ իր հարազատները արդեն 12 ժամ է, ինչ գտնվում են օդանավակային խցում: Նա դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմին, ԱԳՆ, Բուլղարիայում Հայաստանի դեսպանատանը: Նամակ ուղարկելուց 8 ժամ հետո՝ դեսպանատնից նրան պատասխանել են, որ նամակը ուղարկեն անգլերեն կամ ռուսերեն:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել է կապ հաստատել ԱԳՆ մամուլի խոսնակի հետ, սակայն մեր զանգերը մնացել են անպատասխան:

ԻՆՉՈՒ Է ՎԱՏԱՑԵԼ ՍՐԲԱԶԱՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

«Սրբազան շարժման» առաջնորդ Բագրատ Սրբազանն արդեն մի քանի օր է՝ Երեւանի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ վերջին ժամանակահատվածում Սրբազանն իրեն լավ չի զգացել. նա շաքարային դիաբետ ունի, ինչի համար հիվանդանոցում է: Մենք տեղեկացանք, որ ստուգումներ է անցել, բժիշկները հորդորել են գոնե մեկ շաբաթ մնալ իրենց հսկողության տակ:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ այս պահին էլ Բագրատ Սրբազանը հիվանդանոցում է, բայց որոշել է վաղը (խմբ.) անպայման Երեւանի Սուրբ Աննա եկեղեցու մոտ հանդիպում ունենալ քաղաքացիների հետ:

Մեր տեղեկությունների համաձայն՝ այս պահին Սրբազանն իրեն լավ է զգում:

Հիշեցնենք, որ երեկ (խմբ.) «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել էր Սրբազան հոր օգնականի՝ Լիդյա Մանթաշյանի հետ՝ պարզելու, թե ինչպես է Սրբազան հոր ինքնազգացողությունը հիմա:

Մեզ հետ զրույցում Բագրատ Սրբազանի օգնականն ասել էր. «Սրբազանը շատ լավ է իրեն զգում, առաջին օրվանից էլ լավ է զգացել իրեն, այնպես չէ, որ վատ է զգացել ու տարել են հիվանդանոց: Առողջական խնդիրներ է ունեցել, հիմա ամեն բան լավ է: Հիվանդանոցից դուրս չի գրվել, կաթիլայիններ է ընդունում, դեռ հիվանդանոցում է: Բժիշկներն են ցանկացել, ասել են՝ 1 շաբաթ մնա իրենց մոտ՝ հասկանալով իր ծանրաբեռնվածությունն ու գրաֆիկը, որպեսզի հետագայում արդեն ակտիվ փուլ մտնելիս հանգիստ լինի»:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

ԻՆՉ Է ՊԱՐԶԵԼ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ավարտվել է «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանող Ռաֆիկ Հովհաննիսյանի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով երկու մեղադրյալի մասով նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ ապացուցողական մեծածավալ եւ համակարգված գործողությունների արդյունքում պարզվել են քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, միջադեպին մասնակից անձանցից երեքի ինքնությունը:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Ա.Մ.-ն, Դ.Պ.-ի, Հ.Ս.-ի եւ քննությամբ դեռեւս ինքնությունները չպարզված այլ անձանց հետ, 2024 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, դանակով զինված, նախկինում տեղի ունեցած վիճաբանության համար 17-ամյա Ռաֆիկ Հովհաննիսյանից վրեժ լուծելու շարժառիթով, գնացել էր «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի հարակից տարածք:

Քոլեջի հարեւանությամբ գործող սննդի կետի մոտ տեսնելով վերջինիս՝ Ա.Մ.-ն, հիշյալ անձանց հետ փոխլրացնելով միմյանց գործողությունները, հասարակության նկատմամբ անհարգալից եւ իրավական ու բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով, համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, սննդի կետի աշխատակիցների, հարակից բնակելի շենքի բնակիչների եւ նշված հատվածում գտնվող այլ անձանց անդորրը խախտելով, հայհոյելով, հարձակվել էր Ռաֆիկ Հովհաննիսյանի վրա եւ վերջինիս սպանելու նպատակով՝ իր մոտ գտնվող դանակով հարվածներ էր հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, ինչի պատճառով երիտասարդն ընկել էր գետնին: Այնուհետեւ Ա.Մ.-ն, Դ.Պ.-ն, Հ.Ս.-ն եւ խմբի կազմում գործող, դեռեւս ինքնությունը չպարզված անձը շարունակել էին ձեռքերով, ոտքերով եւ մահակով հարվածներ հասցնել տուժածի գլխին ու մարմնի տարբեր հատվածներին:

Ստացած բազմաթիվ վնասվածքներից 17-ամյա երիտասարդը, դեպքից կարճ ժամանակ անց՝ ժամը 13:00-ին, բժշկական կենտրոնում մահացել էր:

Ավելի վաղ տեղեկացրել էինք նաեւ, որ նախաքննության սկզբնական փուլում ձեռք բերված տվյալների, այդ թվում՝ Ա.Մ.-ի տված ցուցմունքների հիման վրա, ծանր հանցագործություն կատարելու համար մեղադրանք էր ներկայացվել այլ անձի, ում նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել կալանքը:

Քրեական վարույթի հետագա նախաքննության ընթացքում կիրառված քննչական մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել էր հանցագործության իրական կատարողը. պարզվել էր, որ խուլիգանության դեպքի մասնակից Ա.Մ.-ն, վարույթն իրականացնող մարմնին շփոթեցնելու նպատակով, նախաքննության սկզբնական փուլում տվել էր խեղաթյուրված ցուցմունքներ՝ սպանության կատարումը վերագրելով իր ընկերոջը՝ այդ կերպ փորձելով քրեական պատասխանատվությունից եւ պատժից խուսափել:

Քննությամբ հիմնավորվել էր, որ նշված օրը Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջի մոտ տեղի ունեցած վիճաբանության ընթացքում հենց Ա.Մ.-ն էր իր մոտ պահվող դանակով հարվածներ հասցրել 17-ամյա Ռաֆիկ Հովհաննիսյանի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ, այնուհետեւ Դ.Պ.-ի հետ գնացել էին վերջինիս տուն եւ հանցագործության գործիք ծալովի դանակը եւ փայտյա մահակը թողել այնտեղ:

Քննությամբ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից փոփոխվել է Ա.Մ.-ի եւ Դ.Պ.-ի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը եւ նոր քրեական հետապնդում հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 8-րդ կետերով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, եւ նրանց նոր մեղադրանք է ներկայացվել:

Նշված երկու անձի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել էր կալանավորումը:

Վերջիններիս մասն առանձնացվել է առանձին վարույթում, որով հայտարարվել է նախաքննության ավարտ, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Հետախուզման մեջ գտնվող Հ.Ս.-ի եւ դեպքին մասնակից մյուս անձանց մասով նախաքննությունը շարունակվում է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

15-ԱՄՅԱ ՊԱՏԱՆՈՒ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի օգոստոսի 18-ին հաղորդում էր ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 15:20-ի սահմաններում, որովայնի եւ գլխի շրջանում կտրած-ծակած վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել անչափահաս՝ 15-ամյա պատանի:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 6-րդ կետերով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Դեպքի վայրի՝ Բաղրամյան փողոցի շենքերից մեկի դիմային հատվածում, կատարվել է զննություն, որտեղ գտնվող զրուցարանի նստատեղի վրա հայտնաբերվել են արնանման հետքեր: Հարցաքննվել են դեպքի պահին տվյալ հատվածում գտնվող մի խումբ ականատեսներ, պատանու մարմնական վնասվածքների բնույթը, ստացման մեխանիզմը պարզելու նպատակով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Կատարված վարութային եւ ապացուցողական գործողությունների արդյունքում տվյալներ են ստացվել այն մասին, որ նշված օրը՝ ժամը 15:20-ի սահմաններում, Երեւան քաղաքի Սունդուկյան փողոցի 52-ամյա բնակիչը, նախկինում՝ իր որդու եւ վերջինիս հասակակից 15-ամյա պատանու հետ կապված կենցաղային հարցի շուրջ զրուցելու նպատակով, մոտեցել է շենքի բակում հասակակիցների հետ գտնվող 15-ամյա պատանուն, առանձին զրույցի կանչել նրան: Դրա ընթացքում, ի պատասխան իր հասցեին տղամարդու կողմից հնչեցված հայհոյանքների, պատանին հարվածել է 52-ամյա տղամարդուն, որի հետեւանքով վերջինս վայր է ընկել: Նրանց միջեւ քաշքշուկ եւ վիճաբանություն է սկսվել, որի ընթացքում տղամարդն իր մոտ գտնվող դանակով հարվածել է պատանու ձախ քունքային եւ ձախ ենթակողային շրջաններին՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր մարմնական վնասվածք:

Տղամարդու նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 2- րդ եւ 6-րդ կետերով (զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ անչափահասի առողջությանը ծանր վնաս հասցնելը):

Վերջինիս ձերբակալելու որոշում է կայացվել, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Օգոստոսի 21-ին՝ գիշերային ծառայության ժամանակ, ՊԾ Արարատի մարզի գումարտակի պարեկները Երեւան-Երասխ ավտոճանապարհի Բաղրամյան բնակավայրի վարչական տարածքում՝ ճանապարհի աջակողմյան հատվածում, նկատել են կայանված «Toyota Camry» մակնիշի ավտոմեքենա:

Պարեկները ստուգման նպատակով մոտեցել են նշված ավտոմեքենային եւ պարզել վարորդի ինքնությունը, ապա ավտոմեքենայի հետեւի նստատեղին՝ ակնհայտ տեսանելի վայրում, նկատել են կասկածելի պոլիէթիլենային տոպրակներ՝ թվով 6 հատ:

Պարեկները վարորդին հարցրել են, թե ինչ է տոպրակներում լցված, վարորդը սկսել է տարօրինակ շարժումներ եւ անհասկանալի արտահայտություններ անել, պարեկների կասկածներն ավելի են խորացել, ու հորդորել են վարորդին, որպեսզի բացի տոպրակները: Այնտեղ հայտնաբերվել է խոշոր չափի կանեփանման բույսի դեղնականաչավուն մանրացված, չորացված զանգված:

Տեղում դեպքի մասին պարեկները տեղեկացրել են ոստիկանության Արտաշատի բաժին, որտեղից ժամանած օպերատիվ խումբը պարեկների ուղեկցությամբ վարորդին տեղափոխել են ոստիկանության Արտաշատի բաժին: Դեպքի փաստով ոստիկանության Արտաշատի բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն:

Նախնական տեղեկություններով՝ կասկածյալը Երեւանի բնակիչ 32-ամյա Հայկ Ղ.-ն է: Քննիչի որոշմամբ, վերջինս ձերբակալվել է: Հայտնաբերված թմրամիջոցը կշռում է մոտ 10 կգ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԴԵՊՔԵՐ

Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության հետեւյալ դեպքերը՝ մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու 24, մարմնական վնասվածք պատճառելու 17, թմրանյութի հայտնաբերման 11, ֆիզիկական ներգործության 8, խարդախության 5, հոգեկան ներգործության եւ շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելու կամ աճեցնելու 4-ական, խուլիգանության 3, անձնական ունեցվածքի գողության, վստահված գույքը չարաշահելու, զորակոչից խուսափելու, անձին հետամտելու, ինքնավնասման, փաստաթղթի կեղծիքի, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու ու սառը զենք հայտնաբերելու 2-ական, մարդու առեւանգման, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնական լիազորությունները չարաշահելու, բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, թմրանյութի իրացման, ծառերը, թփերը ապօրինի հատելու, ընդհանուր առմամբ՝ հանցագործության 109 դեպք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 20-ից 21-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 109 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏՆ ԱՆՏԵՂՅԱԿ ԷՐ

Մայիսի 26-ին վարարած Աղստեւը վնասել է Խաշթառակ եւ Լուսահովիտ գյուղերը միջպետական ավտոճանապարհին կապող կամուրջը. այն փակվել է երթեւեկի համար: Հիմնական կամրջից քիչ ներքեւ կառուցվել է ժամանակավոր կամուրջ, որը հուլիսին վարարած Աղստեւը քանդել է: Օգոստոսի 6-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցումներ ենք արել՝ ո՞ր կազմակերպությունը, ինչքա՞ն գումարով էր կառուցել Խաշթառակի ժամանակավոր կամուրջը, ո՞ր կազմակերպությունը, ինչքա՞ն ֆինանսավորմամբ, ե՞րբ է նորոգելու Խաշթառակի ժամանակավոր կամուրջը: Արդյոք նախատեսվո՞ւմ է վերանորոգել Խաշթառակի հիմնական կամուրջը: Օգոստոսի 14-ին մարզպետարանից պատասխանել են? «Խաշթառակի ժամանակավոր կամուրջը կառուցվում է «Վեհ Իշխանասար» ՍՊԸ-ի կողմից եւ գտնվում է ավարտական փուլում: Ներկա պահին մեր կողմից ֆինանսական միջոցներ դեռեւս չեն հատկացվել: Առաջիկա ծրագրերում նախատեսվում է Խաշթառակի հիմնական կամրջի փոխարեն կառուցել նոր կամուրջ»: Մարզպետն անտեղյակ էր, որ վերանորոգված Խաշթառակի ժամանակավոր կամուրջն օգոստոսի 6-ից գործում է:

ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄԻՑ

Կիրանցից տեղեկացանք, որ 11 ընտանիք, որոնց հարազատները զոհվել են հայրենիքի տարածքները պաշտպանելու ժամանակ, հրաժարվել են սահմանազատման անվան տակ Ադրբեջանին հանձնված, կադաստրի վկայականներով իրենց պատկանող հողի, գույքի համար պետբյուջեից փոխհատուցում ստանալուց: Պետական բյուջեից մեծ գումարներ են տրվել նրանց, ովքեր համաձայնել են գործարքին: Գյուղացիների վկայությամբ՝ որպես խանութ ծառայած վագոն-տնակի համար վճարել են 18 միլիոն դրամ, ավտովերանորոգման ոչ մեծ արհեստանոցի տարածքի համար՝ 28 միլիոն դրամ: Գյուղի տների, հողերի համար ավելի մեծ գումարներ են տրվել: Կիրանցի մի բնակչի առաջարկել են 270 միլիոն դրամ, սակայն նա հրաժարվել է: Գյուղի բնակիչները ասացին, որ հետո այդ մարդուն հրավիրել են Երեւան, քննչական կոմիտե, որտեղ տղամարդուն ասել են, որ ինքը եւ իր որդին դիմադրություն են ցուցաբերել ոստիկաններին, կարող են քրեական գործ հարուցել, սակայն կիրանցեցին չի վախեցել քրեական հետապնդումից, չի գնացել գործարքի: Կիրանցի տարածքները Ադրբեջանում հանձնելուց հետո՝ հերոսական Կիրանցում տրամադրություն է փոխվել: Ամեն տարի օգոստոսի 1-ին մեծ շուքով նշվում է Կիրանցի տոնը: Այս տարի գյուղի տոնը անշուք է անցել: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք հղել՝ Ադրբեջանին հանձնված տարածքների դիմաց պետական բյուջեից Կիրանցի բնակիչներին փոխհատուցման գումարների չափի մասին, մարզպետարանից պատասխանել են, որ այդ տեղեկությունը ենթակա չէ տրամադրման, քանի որ այն ունի գաղտնիության դրոշմագիր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՆԵՂՈՍԻ ՏԵՆԴ

ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ

Վերջին օրերին ակտիվորեն քննարկվում է Արեւմտյան Նեղոսի վարակն ու տենդը. ի՞նչ է դա, ինչպե՞ս է փոխանցվում եւ դրսեւորվում, ո՞վքեր են լինում վարակակիրները եւ ի՞նչ հետեւանքներ կարող է թողնել վարակը մարդու օրգանիզմի, առողջության եւ կյանքի վրա:

WNV տեսակի վարակի հիմնական կրողներն ու տարածողները մոծակներն ու թռչուններն են՝ այդ խմբի մի շարք ներկայացուցիչներ: Այն հատկապես արդյունավետ է տարածվում հիգիենայի բացակայության եւ աղտոտվածության բարձր մակարդակի պայմաններում:

Մոծակներից վարակը տարածվում է հիմնականում Culex խմբի մոծակների միջոցով, իսկ շատ հազվադեպ՝ նաեւ տիզերի: WNV տեսակի վարակը տարածվում է կաթնասունների խմբի 30 տեսակի շրջանում, այդ թվում՝ մարդկանց, ձիերի, շների եւ կատուների շրջանում: Հիվանդությունը դրսեւորվում է մարդկանց եւ ձիերի դեպքում, իսկ կատուներն ու շները հազվադեպ են հիվանդանում: Սողունները եւ երկկենցաղները նույնպես կարող են վարակվել, այդ թվում՝ կոկորդիլոսների, ալիգատորների, օձերի, մողեսների եւ գորտերի որոշ տեսակներ: Կաթնասունները, սակայն, համարվում են վարակի փակուղային կրողներ, որոնք իրենց օրգանիզմում զարգացնում են վարակը եւ այն փոխանցում՝ մոծակների միջոցով: Մարդկանց դեպքում փոխանցումը կարող է լինել նաեւ արյան միջոցով: Մարդկանց շրջանում վարակակիրների 80 տոկոսի մոտ Արեւմտյան Նեղոսի տենդը թույլ արտահայտված է լինում, ախտանիշները լինում են կամ շատ թույլ արտահայտված, կամ բացակայում են: Վարակակիրների մոտ 20 տոկոսի շրջանում առաջանում է ջերմություն, գլխացավ, փսխում, ցան, մարմնի ցավեր, իսկ 1 տոկոսի դեպքում այն ծանր դրսեւորումներ է ունենում՝ առաջացնելով մենինգիտ կամ էնցեֆալիտ: Նման դեպքերում առողջացման գործընթացը կարող է տեւել ընդհուպ ամիսներ, իսկ այն հիվանդների մոտ, որոնց դեպքում ախտահարված է նյարդային համակարգը, մահացության ցուցանիշը կազմում է 10 տոկոս: Մարդկանց շրջանում վարակի տարածման տարբերակներից մեկը վարակակիր մոծակների խայթոցն է, որոնք սնվում ե վարակը կրող թռչուններով: Հազվադեպ՝ վարակը փոխանցվում է արյան փոխներարկման, օրգանների փոխպատվաստման կամ հղի կնոջից պտղին անցման միջոցով, ծննդաբերության կամ կրծքով կերակրման ժամանակ, հակառակ դեպքում այն ուղղակիորեն չի տարածվում մարդկանց միջեւ եւ չի կրում օդակաթիլային ճանապարհով փոխանցման բնույթ: Տենդը ծանր բնույթ է կրում 60 տարեկանից բարձր խմբի մարդկանց, ինչպես նաեւ հարակից հիվանդություններ ունեցող անձանց շրջանում՝ ինչպիսիք են քաղցկեղի կրողները, շաքարային դիաբետ եւ այլ հիվանդություններ կրող անձինք: Վարակի տարածումը կանխելու համար նախատեսված պատվաստանյութ մարդկանց համար գոյություն չունի, ինչպես նաեւ հատուկ բուժում. պետք է օգտագործել ցավազրկողներ եւ ջերմիջեցնողներ: Վարակման վտանգը նվազեցնելու լավագույն միջոցը մոծակների խայթոցից խուսափելն է. իսկ մոծակների խայթոցից խուսափելու համար պետք է պայքարել աղտոտվածության դեմ, ազատվել ջրային կուտակումներից՝ ճահիճներ, աղտոտված ամբարներ եւ լճակներ, պատուհաններին ցանցե պատնեշներ դնել եւ այլն: Վիրուսը հայտնաբերվել է Ուգանդայում 1937 թվականին եւ երկրից դուրս առաջին վարակակրի մասին հայտարարվել է Հյուսիսային Ամերիկայում 1999 թվականին:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՆԳԻՍՏԸ՝ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

ՈՒՐ ԳՆԱԼ ԵՎ ԻՆՉ ԱՐԺԵՔՆԵՐ ԱԿՆԿԱԼԵԼ

Վերջին տասնամյակում Հայաստանից դեպի Հունաստան չվերթների քանակն ավելացել է, ինչը պայմանավորված է այցագրի համեմատաբար հեշտ տրամադրմամբ:

Հունաստանը շենգեն այցագրային գոտու այն երկրներից է, որն անհամեմատ հեշտ է այցագիր տրամադրում ՀՀ քաղաքացիներին:

Եթե ամռան վերջին օրերին ցանկանում եք Հունաստան հանգստի մեկնել, սակայն նախապես ոչինչ չեք կազմակերպել, ապա այս պահի դրությամբ Երեւան-Աթենք-Երեւան օդանավային տոմսերի արժեքը սկսվում է 160 հազար ՀՀ դրամից:

Եթե ցանկանում եք կացության համար հյուրանոց ամրագրել հենց Աթենքում, ապա պետք է մեկ գիշերվա համար նախատեսել 25-ից 60 հազար ՀՀ դրամ: Իհարկե կարելի է եւ ավելի թանկարժեք հյուրանոցներում գիշերել, եթե այդ հնարավորությունն ունեք: Բնակարանի վարձակալության համար մեկ գիշերվա համար նախատեսված արժեքը տատանվում է 25-ից 100 հազարի միջեւ:

Եթե ցանկանում եք հանգիստը վայելել հունական կղզիներում, ապա պետք է վճարել նաեւ ներքին չվերթների համար, որոնք տատանվում են 20-ից 50 հազարի միջեւ: Այստեղ կեցության համար ավելի շատ գումար պիտի նախատեսեք: Հնարավոր է գտնել նաեւ բյուջետային տարբերակներ, սակայն լավ հյուրանոցների մեծ մասում մեկ գիշերվա համար արժեքը սկսվում է 50 հազար դրամից:

Եթե մեկնում եք Հունաստան, ապա չմոռանաք անպայման այցելել երկրի դեմքը հանդիսացող պատմամշակութային վայրեր: Նախընտրելի է նախապես ամրագրել մուտքի տոմսերն ու գնել՝ առանց հերթի ներս մտնելու տարբերակով: Այստեղ պետք է անպայման տեսնել Կրոպոլիսը, Ակրոպոլիսի թանգարանը, Պանթեոնը, ձիթենու եւ նարնջի այգիներն ու բազմաթիվ արժեքավոր այլ վայրեր:

Հ. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

● *Անցած օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 19 մարդ ստացել է ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԱՐՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2024 թվականի հուլիս ամսվա ընթացքում «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ թույլ տված հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվությունը:

2024 թվականի հուլիս ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով 12 հարկ վճարողի մոտ արձանագրվել է «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում:

Հսկողական միջոցառումների արդյունքում, հարկ վճարողներին ընդհանուր առմամբ առաջադրվել է 5.7 մլն դրամի չափով տուգանք:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Շիրակի մարզպետի աշխատակազմում մարզպետ Մուշեղ Մուրադյանի, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանի գլխավորությամբ անցկացվել է Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի հերթական գյուղատնտեսական հաշվառման նախապատրաստման եւ անցկացման մարզային հանձնաժողովի նիստը, որին մասնակցել են նաեւ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, կոմիտեի նախագահի տեղակալ Գագիկ Անանյանը, մարզի համայնքների ղեկավարներ, տեղակալներ, մարզպետի աշխատակազմի, վիճակագրական կոմիտեի, աշխատակազմերի ներկայացուցիչներ:

Գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրականացնելու են հաշվարարները, գործընթացում Շիրակի մարզում կներառվի շուրջ 448 հաշվարար: Վերջիններս տեղեկատվություն տրամադրողներից՝ գյուղաբնակ անհատական տնային տնտեսություններից, գյուղատնտեսությամբ զբաղվող քաղաքաբնակ անհատական տնային տնտեսություններից, գյուղատնտեսությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերերից եւ իրավաբանական անձանցից հավաքագրում են համընդգրկուն տվյալներ գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ:

Գյուղատնտեսության կառուցվածքին են վերագրվում գյուղատնտեսական նշանակության հողերը, մշակաբույսերի ցանքատարածությունները եւ բազմամյա տնկարկների տարածությունները, հողերի ոռոգման աղբյուրները, գյուղատնտեսական կենդանիները, տեխնիկան, շինությունները, մարդկային եւ նյութական առկա ռեսուրսները:

Օրենքով սահմանված կարգով, համատարած հաշվառումները կրում են պարտադիր բնույթ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար: Վերջիններս պարտավոր են սպառիչ պատասխաններ տալ հարցաթերթի բոլոր հարցերին:

«ԲՐԻԿՍ»

ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿԹՈՂՆԻ ՀՀ-Ի ՎՐԱ

2006 թվականին Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը եւ Չինաստանը ստեղծեցին «Բրիկ» խումբը: Հարավային Աֆրիկան միացավ 2010 թվականին՝ դարձնելով այն «Brics»:

Խումբը նախագծված էր համախմբելու աշխարհի ամենակարեւոր զարգացող երկրները, մարտահրավեր նետելու Հյուսիսային Ամերիկայի եւ Արեւմտյան Եվրոպայի ավելի հարուստ երկրների քաղաքական եւ տնտեսական հզորությանը, հետագայում խմբին միացան նաեւ Եգիպտոսը, Իրանը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Սաուդյան Արաբիան եւ Եթովպիան:

Խումբը սահմանում է առաջնահերթություններ եւ որոշումներ կայացնում տարեկան գագաթնաժողովում: Անդամները հերթով կատարում են նախագահի պաշտոնը մեկ տարի:

Ընդլայնված խմբի անունը դեռ չի հայտարարվել, բայց կարող է լինել «Brics +»:

Brics-ի երկրները ներառում են խոշոր համաշխարհային ուժեր, ինչպիսիք են Չինաստանը եւ Ռուսաստանը, եւ երկրներ, որոնք ազդեցիկ են իրենց մայրցամաքում, ինչպիսիք են Հարավային Աֆրիկան եւ Բրազիլիան:

Ընդլայնված խումբն ունի մոտ 3,5 միլիարդ բնակչություն կամ աշխարհի բնակիչների 45%-ը:

Անդամների տնտեսությունները միասին կազմում են ավելի քան 28,5 տրիլիոն դոլար՝ համաշխարհային տնտեսության մոտ 28%-ը:

«Բրիկսին» անդամ երկիր Ռուսաստանը 2024 թվականի հոկտեմբերին կհյուրընկալի գագաթնաժողովը Կազանում:

Նախագահ Վլադիմիր Պուտինն ասել է, որ ցանկանում է բարձրացնել Brics-ի դերը միջազգային ֆինանսական համակարգում, զարգացնել համագործակցությունը բանկերի միջեւ եւ ընդլայնել Brics արժույթների օգտագործումը, ինչպես նաեւ խթանել հարկային եւ մաքսային մարմինների միջեւ համագործակցությունը:

Շաբաթներ առաջ Ադրբեջանի Միլի մեջլիսի նախագահ Սահիբա Գաֆարովան, ելույթ ունենալով BRICS-ի խորհրդարանական ֆորումի լիագումար նիստում, որն անցկացվում է Սանկտ Պետերբուրգում, ասաց, որ ցանկանում են դառնալ BRICS-ի լիիրավ անդամ:

Թե ինչպես սա կանդրադառնա Հայաստանի Հանրապետության վրա, հստակ ոչինչ հայտնի չէ, սակայն շատ քաղաքական գործիչներ ասում են՝ նրանց անդամակցությունը չի կարող լավ անդրադառնալ Հայաստանի համար:

Փորձագետները չէին սպասում ԲՐԻԿՍ խմբի երկրների միջեւ տնտեսական համագործակցություն: Մանավանդ չէին ենթադրում, որ ԲՐԻԿՍ-ի երկրները կձեւավորեն մի տնտեսական բլոկ կամ պաշտոնական առեւտրային ասոցիացիա, ինչպիսին է Եվրասիական տնտեսական միությունը: Սակայն ժամանակի ընթացքում երեւաց, որ ԲՐԻԿՍ խմբի չորս երկրները փորձում են ստեղծել մի քաղաքական ակումբ կամ խորհուրդ, եւ այդ կերպ իրենց զարգացող տնտեսական հզորությունը վերափոխել աշխարհաքաղաքական ազդեցության: Այդ քայլերից էր 2008 թվականին Եկատերինբուրգում ԲՐԻԿՍ խմբի երկրների արտաքին գործերի նախարարների գագաթնաժողովը, ինչպես նաեւ նույն երկրների առաջնորդների հանդիպումը 2009 թվականին:

ԲՐԻԿՍ-ի անդամ երկրները բնութագրվում են որպես արագ զարգացող հզոր երկրներ: Այս երկրների բարենպաստ դիրքն ապահովում է համաշխարհային տնտեսության մեջ նրանց կարեւոր դերը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ԱՇԽԱՏՈՂԻՆ ՉՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ 53 ԴԵՊՔ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, nr 2024 թվականի հուլիս ամսվա ընթացքում ավարտված հսկողական աշխատանքների արդյունքներով վարձու աշխատողի չձեւակերպման դեպքեր արձանագրվել են ընդհանուր առմամբ 53 հարկ վճարողի մոտ, իսկ տուգանքի չափը կազմել է 37.250 մլն դրամ:

Երեք եւ ավելի վարձու աշխատողների չձեւակերպման 17 դեպքով 17 հարկ վճարող տուգանվել է 25.250 մլն դրամով: Մասնավորապես, դեպքերն արձանագրվել են հետեւյալ ոլորտներում.

-անվտանգության ապահովման ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 6 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.5 մլն դրամ տուգանք,

-կաթնամթերքի արտադրության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 8 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 2 մլն դրամ տուգանք,

-հանրային սննդի ոլորտում (հանդիսությունների սրահ չունեցող) 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով բացահայտվել է 16 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 4 մլն դրամ տուգանք,

-մթերային խանութում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 3 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 750 հազար դրամ տուգանք,

-շինարարության (բացառությամբ՝ շենքերի կառուցապատման եւ ճանապարհաշինարարության) 3 հարկ վճարողի մոտ 3 դեպքով բացահայտվել է 16 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 4 մլն դրամ տուգանք,

-սպորտի, զվարճության ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 12 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 3 մլն դրամ տուգանք,

-վարձույթի եւ ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով բացահայտվել է 7 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.750 մլն դրամ տուգանք,

-տնտեսական ապրանքների խանութում ոլորտում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով բացահայտվել է 7 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 1.750 հազար դրամ տուգանք,

-այլ ոլորտներում 5 հարկ վճարողի մոտ 5 դեպքով բացահայտվել է 26 չձեւակերպված վարձու աշխատող, առաջադրվել է 6.5 մլն դրամ տուգանք:

Երեք եւ ավելի չձեւակերպված վարձու աշխատողների մասով խախտում թույլ տված 17 հարկ վճարողների անվանական ցանկը՝ ըստ գործունեության ոլորտների, կցվում է:

Չձեւակերպված վարձու աշխատողների մասով խախտում թույլ տված 53 հարկ վճարողների ցանկը կցվում է:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՖԻԼՄԵՐՈՒՄ ԱՅՆ ՀԱՃԱԽ «ՓՈԽԱՐԻՆՈՒՄ» Է ԿՈԼԻԶԵՈՒՄԻՆ

ԱՄՖԻԹԱՏՐՈՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՆՊԱՅՄԱՆ ՏԵՍՆԵԼ Է ՊԵՏՔ

Հռոմի Կոլիզեումը աշխարհի ամենահայտնի ու հզոր կառույցներից մեկն է: Ամեն տարի միլիոնավոր մարդիկ մեկնում են Հռոմ հենց այս հուշարձանը տեսնելու համար: Ոմանք այն համարում են ուժի և հաղթանակի մարմնացում, ոմանք էլ այն կապում են մահվան և չարչարանքի հետ:

Եվ անկախ տարբեր տեսակետներից այն բոլոր ժամանակներում եղել է ամենաշատ հետաքրքրություն վայելող պատմամշակութային հուշարձաններից մեկը: Սակայն Կոլիզեումը միակը չէ. աշխարհում ավելի քան 200 նման օվալաձեւ ամֆիթատրոններ կան, որոնք հաճախ ավելի քան 50 հազար մարդ են տեղավորել:

Առլի ամֆիթատրոն

Ֆրանսիայի հարավային Առլ քաղաքում գտնվող հռոմեական ամֆիթատրոնը կառուցվել է 90 թվականին եւ հյուրընկալել 20 հազար մարդու, որոնք ներկա են գտնվել կառքերի մրցավազքերի եւ արյունալի ձեռնամարտերի: Այստեղ ժամանակին անցկացվել են նաեւ ցլամարտեր, համերգներ եւ թատերական ներկայացումներ:

1981 թվականին Առլի ամֆիթատրոնը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում քաղաքի այլ հռոմեական եւ միջնադարյան շինությունների հետ՝ որպես Առլ հռոմեական եւ ռոմանական հուշարձանների խմբի մաս:

Քասր ալ Ժամ ամֆիթատրոն

Այն կառուցվել է մ.թ.ա. 232-ից 238 թվականներին Աֆրիկայի պրոկոնսուլ Մարկոս Գորդիանոսի հրամանով Թունիսի Տիսդրե քաղաքում Կոլիզեյի նմանությամբ: Քաղաքն այժմ կոչվում է Ալ Ժամ: Ամֆիթատրոնը տեղավորում է 30 հազար մարդ, որը մեծությամբ երկրորդն է՝ Կոլիզեումից հետո: 1979 թվականին ամֆիթատրոնի մնացորդները ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Հետաքրքիր է այն փաստը, որ ֆիլմերում Կոլիզեումում ընթացող իրադարձությունները հաճախ նկարահանվել են հենց Մարկոս Գորդիանոսի ամֆիթատրոնում, քանի որ վերջինս շատ ավելի ամբողջական է պահպանվել:

Փուլա Արենա

Խորվաթիայում գտնվող հռոմեական ամֆիթատրոնի կառուցման աշխատանքները սկսվել են մ.թ.ա. 27 թվականին եւ ավարտվել 68 թվականին: Այն պահպանված հռոմեական ամֆիթատրոնների շարքում վեց մեծագույններից է: Այսօր ամֆիթատրոնը վերականգնված է եւ ծառայում է մշակութային միջոցառումների իրականացմանը: 1932 թվականին իրականացված վերականգնումից եւ հարմարեցումից հետո այն ունի 7000 նստատեղ եւ կանգնելու համար նախատեսված տարածքները ներառյալ կարող է ընդունել 12.500 մարդու:

Ստորեւ ներկայացնում ենք 10 լավագույն հռոմեական ամֆիթատրոնները, որոնք պետք է անպայման տեսնել:

Կոլիզեում. Հռոմ, Իտալիա
Քասր ալ Ժամ. Ալ Ժամ, Թունիս
Նիմի ամֆիթատրոն. Նիմ, Ֆրանսիա
Առլի ամֆիթատրոն. Առլ, Ֆրանսիա
Փուլա ամֆիթատրոն. Խորվաթիա
Ֆլավիան ամֆիթատրոն. Պոցուոլի, Իտալիա
Վերոնայի ամֆիթատրոն. Վերոնա, Իտալիա
Լեփթիս Մագնա. Ուադի Լեբդա, Լիբիա
Կարթագեն. Թունիսի արվարձաններ, Թունիս
Ալեքսանդրիա ամֆիթատրոն. Ալեքսանդրիա, Եգիպտոս

ՀՈՒՌԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

«ՆՈՐԱՐԱՐ ՄԻԱՍԻՆ» ՖՐԱՆԿՈՖՈՆ ՃԱՄԲԱՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի ֆրանսախոս տարածաշրջանային կենտրոնի (CREFECO) հետ համատեղ Դիլիջանի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի (Թումո) մասնաճյուղում կազմակերպել է «Նորարար միասին» ֆրանկոֆոն միջազգային ամառային ճամբարը:

Ճամբարին մասնակցում են 15-17 տարեկան 16 դպրոցականներ Հայաստանից, Բուլղարիայից, Հյուսիսային Մակեդոնիայից, Ռումինիայից, Ալբանիայից, CREFECO-ի նոր անդամ երկրներ հանդիսացող Վրաստանից, ինչպես նաեւ Կոսովոյից եւ Մոլդովայից:

Ճամբարի շրջանակում CREFECO-ի կողմից Դանիայից հրավիրված SS ոլորտի մասնագետը կանցկացնի 6-օրյա դասընթացներ: Ճամբարի ծրագրում ընդգրկված են բազմաբնույթ ուսուցողական, ինտելեկտուալ, սպորտային միջոցառումներ:

Ճամբարը բացառիկ եւ յուրահատուկ հնարավորություն է պատանիների համար թե՛ ֆրանսերենի խթանման, թե՛ նոր կրթական հնարավորությունների փորձարկման, եւ թե՛ աշխարհի տարբեր երկրներից նոր ընկերների ձեռքբերման համար:

7-օրյա ճամբարը կշարունակվի մինչեւ օգոստոսի 26-ը:

ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն արդեն 11-րդ անգամ անցկացնում է Համահայկական հայագիտական օլիմպիադան:

Այս տարի օլիմպիադային մասնակցել է 14-18 տարեկան 53 պատանի՝ Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Իսպանիայից եւ Բուլղարիայից:

Օլիմպիադայի նպատակն է խրախուսել հայոց լեզվի, գրականության եւ պատմության իմացությունն արտերկրում բնակվող հայ երեխաների շրջանում, օգնել նրանց ճանաչել Հայաստանը եւ ծանոթանալ տարբեր երկրներում բնակվող հասակակիցների հետ:

Օլիմպիադան անցկացվել է երեք թեմատիկ ուղղությամբ՝ հայոց լեզու, գրականություն եւ հայոց պատմություն:

Հարցաշարերը կազմել են մասնագիտական հանձնաժողովները, որոնց կազմը համալրվել է տարբեր բուհերից:

ԿԳՄՍՆ արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի պետ Կարեն Մնացականյանի խոսքով՝ օլիմպիադան այս տարի անցկացվել է այլ ձեւաչափով՝ որպես ստուգատես, այլ ոչ թե մրցույթ, հետեւաբար հաղթողներ չեն առանձնացվել: Մասնակիցներին հարցերի շրջանակ եւս նախապես չի տրվել: «Թեեւ մասնակիցները նախապես չեն ունեցել հարցերի շրջանակը, բայց, ի զարմանս մեզ, արդյունքները սպասվածից լավ էին»,- ասում է Կարեն Մնացականյանը:

Օլիմպիադայի կազմակերպման գործընթացում նոր ձեւաչափ էր նաեւ վիկտորինայի անցկացումը: Թիմերը ձեւավորվել են տարբեր համայնքների մասնակիցներից՝ միմյանց ծանոթացնելու եւ նրանց միջեւ նոր կապեր հաստատելու նպատակով:

Վիկտորինայի յուրաքանչյուր պատասխան մասնագետի կողմից վերլուծվել եւ ներկայացվել է երեխաներին՝ ամրապնդելու գիտելիքը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԺՈԱՈՒ ՖԵԼԻՔՍԸ՝ «ՉԵԼՍԻԻ» ԽԱՂԱՑՈՂ

Պորտուգալացի հարձակվող Ժոաու Ֆելիքսը տեղափոխվեց Լոնդոնի «Չելսի», հայտնում է ակումբի պաշտոնական կայքը:

Լոնդոնյան ակումբը հայտարարել է Մադրիդի «Ատլետիկոյից» 24-ամյա հարձակվողի տեղափոխության մասին:

Պորտուգալացին նախկինում արդեն վարձավճարով հանդես է եկել «Չելսիում» 2022/23 մրցաշրջանի երկրորդ կեսում:

Հաղորդվում էր, որ «Ատլետիկոն» Ֆելիքսի համար կստանա 50 միլիոն եվրո գումարած 5 միլիոն եվրո բոնուսների տեսքով:

Ավելի վաղ «Չելսիից» մադրիդյան ակումբ էր տեղափոխվել կիսապաշտպան, անգլիացի Ռոնոր Գալահերը՝ 42 միլիոն եվրոյի դիմաց:

ԿՄՐՑԱԿՑԵՆ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԻ ՀԱՄԱՐ

Հորդանանի մայրաքաղաք Ամմանում ընթացող հունահռոմեական ոճի ըմբշամարտի մինչեւ 17 տարեկանների աշխարհի առաջնությունում 51 կգ քաշային Սարգիս Հարությունյանը եւ 71 կգ քաշային Սամվել Տերտերյանը կգոտեմարտեն բրոնզե մեդալների համար: Նրանք հաղթել են ամփոփիչ գոտեմարտերում համապատասխանաբար վրացի եւ չինացի ըմբիշների եւ երեկոյան կփորձեն արդեն նաեւ մեդալներ նվաճել:

Հիշեցնենք, որ Հայաստանը արդեն երկու բրոնզե մեդալ ունի: Երեկոյան բրոնզե մեդալի համար կպայքարի նաեւ Լյովա Շուխյանը, իսկ Մարատ Աճեմյանը կգոտեմարտի ոսկու համար:

ՓԼԵՅ ՕՖՖԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մեկնարկել է Չեմպիոնների լիգայի որակավորման փլեյ օֆֆ փուլը: Դիմակայությունները տնային հաղթանակով սկսել են ֆրանսիական «Լիլը», Խորվաթիայի ու Նորվեգիայի չեմպիոնները՝ Զագրեբի «Դինամոն» ու «Բուդո Գլիմտը»:

«Լիլն» ընդունել է Պրահայի «Սլավիային» եւ հաղթել 2-0 հաշվով: Զագրեբի «Դինամոն» սեփական հարկի տակ 3-0 հաշվով առավելություն է հասել ադրբեջանական «Կարաբախի» նկատմամբ, իսկ «Բուդո Գլիմտը»՝ 2-1 հաշվով հաղթել է սերբական «Ցրվենա Զվեզդային»:

Դիմակայությունների պատասխան հանդիպումները կայանալու են օգոստոսի 28-ին:

Այսօր (խմբ.) առաջին հանդիպումները կանցկացնեն նաեւ հետեւյալ զույգերը.

«Միտդյուլան» (Դանիա) - «Սլովան» (Սլովակիա)
«Մալմյո» (Շվեդիա) - «Սպարտա Պրահա» (Չեխիա)
«Դինամո Կիեւ» (Ուկրաինա) - «Զալցբուրգ» (Ավստրիա)
«Յանգ Բոյս» (Շվեյցարիա) - «Գալաթասարայ» (Թուրքիա)

Բոլոր դիմակայությունների հաղթողները նվաճելու են Չեմպիոնների լիգայի հիմնական փուլի ուղեգիր:

● *Օգոստոսի 24-ին՝ ժամը 20:00-ին, Բաբելոն թատրոնում կցուցադրվի «Պատրանքներ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Հարց. Ի՞նչ աջակցության ծրագրեր է իրականացնում նախարարությունը անասնաբուծության ոլորտում:

(Հմայակ Մկրտչյան, 37 տարեկան, գյուղատնտես)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս տարի նախարարությունը մեկնարկել է երկու ծրագիր՝ ուղղված անասնաբուծության ոլորտի զարգացմանը: Դրանք են «Փոքր եւ միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» եւ «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագրերը: Առաջին ծրագրի շրջանակում պետությունը փոխհատուցում է «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում իրականացրած շահառուների ծախսերը: Երկրորդի դեպքում հնարավորություն է ընձեռվում ընդամենը 2% տարեկան տոկոսադրույքով սուբսիդավորվող վարկով ձեռք բերել բարձր մթերատու տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անասնաբուծությամբ զբաղվել ցանկացողներին մնում է կարողանալ նպատակային այդ վարկերից օգտվել ու իրենց բիզնեսը զարգացնել:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՀԱՐՑ. Գործուղման մեկնած աշխատողին տրամադրվո՞ւմ է արդյոք սոցիալական փաթեթ:

(Ներսես Կիրակոսյան, 56 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սոցիալական փաթեթի գումարը չի հատկացվում առանց աշխատավարձի պահպանման գործուղման մեկնած սոցիալական փաթեթի շահառուներին երեք եւ ավելի ամիս գործուղման մեկնելու ժամանակահատվածի համար: Հիմնական աշխատանքի վայրից այլ աշխատանքի վայր գործուղված սոցիալական փաթեթի շահառուին սոցիալական փաթեթի գումարը հատկացվում է գործուղված աշխատանքի վայրից, եթե վերջինս ընդգրկված է սոցիալական փաթեթից օգտվող հաստատությունների ցանկում, եւ այդ հաստատության կողմից աշխատողին վճարվում է աշխատավարձ: Հիմնական աշխատանքի վայրից այլ աշխատանքի վայր գործուղված սոցիալական փաթեթի շահառուին սոցիալական փաթեթի գումարը հատկացվում է հիմնական աշխատանքի վայրից, եթե գործուղված աշխատանքի վայրն ընդգրկված չէ սոցիալական փաթեթից օգտվող հաստատությունների ցանկում կամ ընդգրկված է, սակայն այդ հաստատության կողմից աշխատողին աշխատավարձ չի վճարվում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանում սոցիալական փաթեթի ներդրումը որոշակի շրջանակների համար աջակցություն էր, սակայն այն ամբողջությամբ չի լուծում խնդիրը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ պաշտոնապես հաստատվել է, որ Շառլ Ազնավուրի հուշարձանի համար հայտարարված բաց մրցույթում հաղթած արձանն արդեն մանրակերտից վերածվում է մեծ քանդակի: Հուշարձանի բացումը նախատեսվում է 2025թ. մայիսի 22-ին՝ որպես մեծանուն երգչի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումների եզրափակիչ արարողություն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	+8 + 13 / +19 + 23
Կոտայքի լեռներ	+8 + 12 / +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 / +25 + 27
Գեղարքունիք	+ 8 + 12 / +17 + 20
Լոռի	+11 + 14 / +18 + 21
Տավուշ	+14 + 18 / +20 + 23
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 / +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 / +25 + 28

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Արարատ	+18 + 20 / +28 + 30
Արմավիր	+17 + 19 / +28 + 30
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 / +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 / +28 + 30
Սյունիքի հովիտներ	+17 + 21 / +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+11 + 14 / +18 + 21
ԼՂՀ	+12 + 16 / +18 + 20
Երեւան	+18 + 20 / +30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.8.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*